

Ա. Կոմիտեն,

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ԵՊՈՍԸ  
„ՍԵՍԻՆՑԻ ԳԱՎԻԹԸ”

891. 99. 09  
4-53

Հ. Խ. Ց. Պ. Ա. Տ. Ա. Տ.

Հ Արմ.  
H 2-5259 2 գ. Կոբուծան

13 APR 2011  
WY

891.99.09

4-53

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ԵՊՈՍԸ  
„ԱԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ“

ԶԵԿՈՒՑՈՒՄ

ԽՍՀՄ ԽՈՐՉՐԴԱՅԻՆ ԳՐՈՒՆԵՐԻ ՄԻՋՈՒՅՆԱՆ ՎԱՐՁՈՒՅՆԱՆ  
«ԱԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ»-Ի 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

ՅԵՐԵՎԱՆՈՒՄ, 1959 թվի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ

Կ.Խ. № 14148

ՀԱՅԿԱՆԱԿԱՆ

ՅԵՐԵՎԱՆ



1940

22.05.2013

63.984

Ընկերներ:

Ինձ մեծ պատիվ և վիճակվել, ՌԽՖՍՀ գրողների հանձնարարությամբ, հայ ժողովրդի մեծ և հերոսական եպոս «Ուսունցի Դավիթ»-ին նվիրված զեկուցում տալու: ՌԽՖՍՀ բոլոր գրականությունների առունից, յեղբայրական ուսուական գրականության առունից ամբողջ հոգով վորչունում եմ տաղանդավոր հայ գրողներին և հանձինս նրանց՝ ազատ ու յերջանիկ հայ ժողովրդին:

Ընկերներ: Այս յերկրի հյուրերն են յեղել Գրիգորյանը ու Պուշկինը: Յերեվանումն ե ասաջին անգամ բեմական մարմանավորում զանել «Խելքից պատուհաս»-ը: Համակրանքի, բարեկամության և սիրո յեղբայրական կապերը գեռ վաղուց են գոյացել հայ և ուստողուրդների միջև, ուստի և հայ ժողովրդի առաջավոր մտքերի միջև: XIX դարի կեսերի հեղափոխական՝ գեմոկրատական շարժումը, վորին գլխավորում ելին Հերցենն ու Զերնիշեվսկին, բեղմնավոր ազգեցություն և ունեցել հայկական կուլտուրայի և հայ գրականության վրա: Հայ բոցաշունչ հեղափոխական նալբանդյանը յեղել ե ինքնակալության դեմ ուղղված մեր ընդհանուր պատմական պայքարի մասնա-



39662-67

В. Кирпотин

Великий эпос армянского народа  
„Давид Сасунский“

Арм. Гиз. ССР, Ереван, 1940 г.

կիցը: Պուշկինի, Լերմոնտովի, Նելլրասովի և այլ ռուս գրողների հանճարն ոգնել և հայ մեծ գրողների ձեւվագործանը, վորի մասին բազմիցս հայտարարել են լավագույն հայ գրողները, և վորոնց թվում չովհաննես թուժանյանը:

Ընկերներ: Այս հանդիսավոր ժամին առանձին եւ բախտագիտությամբ մենք պետք են հիշատակենք Անինի և Ստալինի բարեկամ, ուստական սոցիալիստական գրականության նախահայր, ուստական մեծ գրող Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու անունը: Նա շատ և մեծ հաջողությամբ եւ աշխատել ուստական և հայկական գրականությունների միջն որդանական անքակտելի կապեր ստեղծելու համար: Նա բարձր եր զնահատում հայ ժողովրդի կուլտուրական ժառանգության անսպառ հարստությունը, նա հարգում և սիրում եր իրեն ժամանակակից առաջավոր հայ գրողների ստեղծագործությունը: Նրա խորհրդով եր, վոր Պ. Յա. Բրյուսովը կատարեց հայկական պոեզիայի ուսումնակիրության, թարգմանության և մասսայականացման հիմնալի աշխատանքը: Գորկին իր անխոնջ գործունեյությամբ չափազանց շատ և նպաստել հայկական ու ուստական և ԽՍՀՄ-ի մյուս բոլոր գրականությունների միջն յեղբայրական փոխազդեցություն կազմակերպելու գործին:

Ռուսական և հայկական գրականությունների միջն գոյություն ունեցող սերտ կապերի ցայտուն դըրսելուրում և հանդիսանում «Սասունցի Դավիթ» եպոսի ուստական թարգմանությունը, վոր ամենակարճ ժամանակամիջոցում կատարեց բանաստեղծներ Շեր-

վինսելու, Դերժավինի, Կոչետկովի, Լիպկսերովի բրիգադն:

Հայկական կուլտուրայի և հայկական գրականության այսորված տոնը մեր ամբողջ համամիութենական գրականության, համամիութենական կուլտուրայի տոնն և հանդիսանում: Այն որերին, յերբ կապիտալիստական աշխարհը վառվում է իմակարիական սոր, անարդարացնի պարերազմի բոցերում, մենք բովանդակ ԽՍՀ Միությունից հավաքվել ենք այսուղ, այս հանդիսանում: Վորը հանդիսանում է լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության արդասիքն ու գրաեկորումը:

Մենք կարող ենք ազատորեն զբաղվել մեր կուլտուրական գործերով, վորովհետեւ մեր յերկրի քաղաքականությունը ղեկավարում և բոլցեկինների իմաստուն կուսակցությունը, վորովհետեւ ԽՍՀՄ-ի ժողովուրդներին հաստատուն բազուկով առաջնորդում և հանճարեղ նավազար Ստալինը: Մենք կարող ենք հանդիսավորությամբ տոնել «Սասունցի Դավիթ»-ի հոբելյանը, վորովհետեւ մեր սահմանների, մեր նվաճումների, մեր աշխատանքի, մեր ստեղծագործության պաշտպանության դիրքերում, սոցիալիզմի պաշտպանության դիրքերում կանգնած և անպարտելի, աշխարհին հզորագույն կարմիր Բանակը:

Ընկերներ: Իրար հետ պատերազմող իմակերիալիստական կառավարությունների առաջին միջոցառումներից մեկը յեղավ կրծատել և անդամ զադարեցնել դպրոցական ուղարակմունքները: Կրծատել բարձրագույն ուսումնական հիմնարկների թիվը կամ նույնիսկ դադարեցնել նրանց պարագմունքները: Դուք հիշում եք, ընկերներ, վոր մենք քաղաքացիական

պատերազմի ամենադժվարին ժամանակաշրջաններում  
վոչ միայն չելինք դադարեցնում լարված ուսուցումը,  
այլև, ընդհակառակը, ամեն կերպ ընդլայնում է-  
լինք այն. սովորում եր յերիտասարդությունը, սովո-  
րում ելին տարիքավորներն ու ծերերը, սովորում  
ելին կանայք և տղամարդիկ, սովորում եր Կարմիր  
Բանակը: Յեկ այդ վոչ թե թուլացնում, այլ ուժեղաց-  
նում եր մեզ: Ինչո՞ւ: Վորովհետեւ, ընկերներ, մենք  
մեր ուսերի վրա ըրում ենք նոր աշխարհը, ձշմար-  
տության և բանականության աշխարհը, կուլտուրա-  
յի և հումանիզմի աշխարհը: Մեր ուժը-համակ սպա-  
ռազեն առաջավոր մարդկանց նախահարձակ ուժն և,  
լուսավորված և կազմակերպված մասսաների ուժն և:  
Այդ պատճառով ել, ընկերներ, մեր այսորվա տոնը,  
«Սասունցի Դավիթ»-ի հորելյանը, վոչ միայն հարըս-  
տացնում և մեզ կուլտուրապես, այլ և ավելացնում և  
մեր կարողությունը: Ժողովրդի կուլտուրան և ժողովր-  
դի ուժը խորհ գայլին պայմաններում հանդիսանում էն  
փոխարձաբար իրար լրացնող հասկացողություններ:  
«Սասունցի Դավիթ»-ի հորելյանը ժողովուրդների  
ստալինյան բարեկամութ ան ցու ազրումն և, հայ  
ժողովրդի և ԽՍՀՄ բոլոր մյուս ժողովուրդների հա-  
մախմբվածության զրահիվորուն իրենց խորհրդային  
կառավարության շուրջը, կուսակցության շուրջը,  
ժողովուրդների առաջնորդ Ստալինի շուրջը:

Սանասարը և Բաղրամարը, Մհծ Մհերը, Դա-  
վիթը և Փոքր Մհերն այսօթ ել լավ են ծառայում  
ժողովրդին. Նրանց կերպարները, նաև նրանց փառքը,  
նրանց սիրադործությունները, նրանց գործողու-  
թյուններն այսօթ ել համախմբում են արդին խոր-

հըրդային ժողովուրդներին, զարու թու անզուսպ ցա-  
սում են արթնացնում բոլոր բանց գեմ, ովքեր կհան-  
դընեն թեկուզ և մեկ մատով խախտել մեր խորհրդա-  
յին սրբազն սահմանների անձեռնմիելիությունը:

Սոցիալիստական Հայաստանի տոնը սրտազին և  
ջերմորեն են բաժանում Միության բոլոր հանրապե-  
տությունները Մի մասնակցությունը որդանական,  
միս ու արյուն դարձած աղղային միասնության դրսե-  
վորութիւն ե: Դրա համար ել մենք այստեղ յեկել ենք վոչ  
միայն վորպես հյուր, վողջույնի խոսքերով, այլև վոր-  
պես այս պլենումի գործարար մասնակից, մեր զե-  
կուցողներով, վորպեազի մեր լուման ևս մտցնենք  
«Սասունցի Դավիթ» եպոսի ըմբռնողության  
ու մեկնարանման գործում:

Ընկերներ: Մենք գիտենք, թե ինչքան ծանր փոր-  
ձություններ, ինչը ան վիշտ ու աղետներ և կրել հայ  
ժողովուրդն իր բազմազարյան պատմության ընթաց-  
քում: Մենք հիշում ենք ընկեր Ստալինի այն խոռքե-  
րը՝ ուր, նա մատնանշել և, թե Խորհրդային իշխա-  
նությունը, տառացիորեն հայ ժողովրդին փրկեց կո-  
րսատից: Մենք հիշում ենք և գիտենք նաև, վոր իր  
ծանր փորձությունների ընթացքում հայ ժողովուրդը  
համասորեն պաշտպանել և ազատ գոյության իր ի-  
րավունքը: Նրա ցուցաբերած կենսունակությունն ի-  
րոք վոր ազշեցուցիչ ե: Յեկ ահա, ընկերներ, «Սա-  
սունցի Դավիթ»-ի յուրաքաջուր առողը զալիս և մեզ  
առելու համառության, արխության, կենսակամեցողու-  
թյան մասին: Յուրաքանչյուր նվաճող սպառնում եր  
արմատախիլ անել հայ ժողովրդին, ջնջել նրան յերկ-  
րի յերեսից: Ժողովրդի բանաստեղծական ֆանտազիան  
ապրելու համառության իր մտապատկերն արտա-

հայտել ե այն վտակի պատկերով, վոր բուռն թափով  
գահավիժում ե բարձրաբերձ լեռներից և իր առանձ-  
նահատկությունները չի կորցնում գետի ջրերում, ուր  
թափում ե նա: Սանասարն ու Բաղդասարն իրենց  
ուժը, իրենց մարմավորված ժողովրդի ուժը նույնաց-  
նում են այդ վտակի ջրի հետ:

Մենք զարբա, ես զո.ր զորբա:

Ժողովրդական ուժի ազրյուրն անվանի, հարուսա-  
անձնավորությունները չեն, թագավորները և քահա-  
նաները չեն: Ժողովրդի կանունակության հիմքն  
ինքը ժողովուրդն ե: Հայկական ազգային եպոսն իր  
հերոսներին պատկերում ե վորպիս ժողովրդի առաջ-  
նորդներ և ներկայացուցիչներ - բայց նրանք թա-  
գավորներ չեն, իշխաններ չեն: «Սասունցի Դավիթ» - է  
մեջ չկա վոչինչ պալատակ ան, արիստոկրատական,  
բոլոր կերպարները, մակդիրները, եպոսի վոգին իսկ  
կրուս են ժողովրդական, գեղջկական բնույթ: Ժողովր-  
դական տրադիցիան սասունցիներին կոչում ե «ան-  
տաշ ժողովուրդ», «համառ ժողովուրդ», եպոսի գլխա-  
վոր հերօսը - Դավիթը համախ կոչվում ե ընկեցիկ,  
անազգական քոթոթ շաղգամակեր: Նա թիգուտ ե: Դա  
հայկական Միկուլա Սելյանինովին ե և վոր, թե ժո-  
ղովրդից բարձր կանգնած «կապոյտ արյան» առ-  
պիտը:

Եպոսի կերպարները ստեղծել ե ինքը ժողովուրդը,  
նրա աշխատավոր մասսաները, նրանք կազմավորվել  
են զյուղացու խրճիթում, հովվական վրանում, ժո-  
ղովրդական ու շիրահաջորի սրջագոյրում և վոչ թե  
պալատում կամ ասպետական դղյակում: Հենց Սա-

սուն անունը գտել ե, ըստ ավանդության, հասարակ  
մի մաճկալ, զյուղացի:

Եպոսի կոլեկտիվ ստեղծողը հարկ չի համարել եմբլե-  
մատիկ - ազնվականական բնույթ տալ տոհմի անունին:

Սասունցի քաջերը ժողովրդի գիտակցության մեջ  
միշտ ապրել են վորպիս աշխատավորների ներկայացու-  
ցիչներ: Նրանց կենցաղը, նրանց բարքերը, նրանց սո-  
վորույթները հասարակ մարդկանց կենցաղ, բարքեր  
և սովորույթներ են: Մեծ Մհերը «իմեղձերու պապ  
ու մամ» ե կոչվել: Սանասարը և Բաղդասարը, կա-  
ռուցելով Սասունը, անսեղ բնակեցնում են չքավոր-  
ներին: Նրանք նախ տներ են շինում՝ յունեվորների  
համար, ապա միայն կառուցում են բերդը:

Սանասար ասոց Բաղդասարին.

— Առաջ զմօր բերդ շինենք

Թե չե՞ առաջ զեդա աղքատ - ուղի և սեներ,  
Բաղդասար պատասխանենք.

— Առաջ շինենք զեդոնց սեներ,

Ու նոր շինենք զմեր բերդ,

Եղ խեղն մարդեր չեն կարևո

Արեգաւն առևե կենա:

Ու սկսեցին զսեներ:

Սասունը նահապետական հովվական և զյուղացիա-  
կան համայնքի տոհմ ե, մի տեսակ Տարբագատար,  
վորի մասին յերազում եր ոռուսական մեծ բանաստեղծ  
նեկրասովը և ուր վոչ հարկ են վերցնում, վոչ ել  
տուրք: Դրանումն ե նրա ձգողական ուժը: Մարդկի,  
լուլով Սասունի ժառաքի մասին, թողնում ելին այն  
տեղերը, ուր թալանում ու ճնշում ելին նրանց, այն

ել վոչ միայն այլացեղ, այլև սեփական շահագործող-  
ները, ուր հարձակվում եյին նրանց հոտերի վրա և  
խլում անասունները:

Ընկը են տափածք, մեր կե՛րանք եղա Սառաւ,  
Վոր Սանասարի, Բաղդասարի պես՝  
Յեւկու զորեղ փանիլիվոն կա,  
Վոր եղ տեղի մարզոց վաշ բարկ կա՛ռնեն վաշ տուր,  
Վոր մե՛ մարդ մեր ապրանք չզօրնեն տանի:

Դավիթը նախապես մեծանում եւ ուրիշի տանը,  
Մսրա Մեկքի պալատում, վորպես աղքատ խորթոր-  
դի, վորպես մի մարդ, վորին պահում են ատելի ձրիա-  
կյացի վիճակում։ Տոհմիկ ու իշխանական պալատա-  
կանները նրան թույլ չեն տալիս իրենց խաղաշը-  
ջանը։

Մեկտեղ գննողին իր իշխաններ,  
Կորիչ մարդու, փանիլիվոններ։  
Գնացից են դաշ, բարե կալի մեջ գուրզ բալին։  
Կովիր նաևցոցին եղ կոլի մաս,  
Մեկ արտաշուի հեռու դրին։

Դավիթը Սասունում թագավոր չեր, այլ հոտադ:  
Ժողովրդական հպասը ցույց եւ տալիս, վոր Դավիթն  
իր հովական վիճակը գիտում եր իբրև ընական  
և ինքնին հասկանալի մուրան։ Նա այդ վիճակի մեջ  
նվաստացուցիչ, իր արժանապատվությունը զցող վոչ  
մի բան չեր տեսնում։ Յերբ Զենով-Ռանը, նրա հո-  
րագոտ հոգեբայրը, նրան առաջարկեց համայնական  
հոտն արածացնել, նա պատասխանեց.

... Հորովքե՛ր, ինչի՞ չեմ ըլնի.  
Եսակս պարաւ ուրիոն չեմ կորեա՛ տեցացիմ։

Հովվի աշխատանքը Դավիթի համար փորձություն  
չե, ազգականական շնորհագրկություն չե, այլ իսկա-  
կան, լուրջ աշխատանք, մի աշխատանք, վորից կախ-  
ված ե իր և ընտանիքի կերակրումը։

Դավիթ աաց. — Քեռի, գորո՛ւն ե,  
Հօսաղ-մաս ի վոխս ե, ոանցուու վոխս ե:  
Մենի տառում օտնօվ ցեւ ենի եղա ու ն,  
ես դու պարտիոն չե՛ս մեզ զամեն պահես,  
Յելի՛ մեզի աշխատող դարձաւ։  
Դասին, առուն բերենի մեր աշխատանի:  
Փողինի վեր իրուու ուսե՛մ, ապրենի,

Այսպիսի խոսքեր չեր կարող կերտել ֆեռդալ բա-  
նաստեղը, տիրապետող դասաւարգերի յերգիչը։ Այս  
խոսքերը կարող եր կերտել միայն այն յերգիչը, վորը  
մեծացել եւ ապրել և աշխատանքային պայմաններում;  
վորի հոգեբանությունն ամբողջապես սեփական ձեռ-  
քերի ֆիզիկական աշխատանքով իր հացը վաստակող  
մարզու հոգեբանություն եւ։

Դավիթը յոզբայրանում ե հովվի հետ վորպես իրեն  
հավասար մարդու Գյուղացիները գոն եւին Դավիթի  
աշխատանքից, նա լավ եր արածացնում հոտը, անա-  
սունները նրա հսկողության շնորհիվ գիրանում են։

Դավիթի սիրագործությունները շատ վոսկի բե-  
րեցին Սասունին։ Ավարը տալով մայրենի քաղաքին,  
Դավիթը պահանջում է, վոր բաժանում կատարելիս  
աղքատներին չըրէն։

Ես վոսկի՞ն ել առեմ  
Բաժին արե՞ ձեւ տավարի մահի՞ն ե փոխ։  
Համա կաօիք բաղեց տանեն են ըիւարներ,  
Հազնեն իմ հօր խերին։

Վայն ե եկու ծիր զիս տերուն, — ասաց, —  
Թե իմ աղբեւներու հախից նանկ մի կորեկ կրտե՞  
Չեր տուն յես կանեմ Դավթի տվերած:

Դավիթը հովիվների և զյուղացիների հերոսն եւ  
Նա նրանց շահերի պաշտպանն եւ Նրա աշխարհայեւ-  
ցողությունը զգասա ե, սեալիստական: Նա չի կարող  
բավարարգել անզրշիմային յերանության խոռ-  
տումով: Ժողովրդական շահերը խախտողներին նա  
պատրաստ ե ուժով հականարգած տալու:

Ամբողջ եպոսն իսկական՝ դիմոկրատական վոզով ե  
տողորված: Յերգիչներ, վորոնք սերնդեսերունդ յերգեր  
են հորինել Սասունի քաջիրի մասին, միշտ մնում են ժո-  
ղովրդական ներք ախավերի մտապատկերների սահ-  
մաններում: Անգամ այն ժամանակ, յերբ յերգում են  
հարասության մասին, վորոն, անթիվ գանձերի մա-  
սին, նրանց պատկերած կենցաղի կոնկրետ գծերը  
մնում են ափակի ժողովրդական, ափակի զյուղացիա-  
կան: Անոթի Դավիթը Սասունի կառավարիչ Զենով-  
Ռէանի կնոջից ուտելու բան ե խնդրում: Այս եպոսու-  
դը ծավալվում ե արդեն այն բանից հետո, յերբ Սա-  
սունը ստացել ե գեերից Դավիթի խլած առատ վոսկին  
— և այնուամենայնիվ պատումը գծում ե տիսկեկ  
դրուղացիական ժանրային մի տեսարան:

Դավիթ եկավ, ասաց. — Սառյե տնօրի յիմ:  
Սառյես ասաց. — Մեզ հաց չկա:  
Դավիթ նստե ե բնեղրուն շուրը,  
Քամ աշահ կանի, կը նրենքրա:  
Ստոյելիս դժար եկավ, ասաց.

— Դա՛վիթ, ելի, նա ցանցից միշ մի ցան բեր.  
Խմար անեմ, քիսեմ ուտես:

Հնկերներ: Վճր առպետական եպոսում մենք կա-  
րող ենք գտնել այնպիսի տողեր, ուր մեծազարմ մի  
տիրին, կառավարչի կինը, դիմի հերոսին, առաջար-  
կելով ցան բերել թոնիրը վառելու համար: «Սա-  
սունցի Դավիթ»-ը ժողովրդի ծնունդն ե:

Հայկական ժողովրդական եպոսի իդեալը ժողովր-  
դավարությունն ե: Այս իդեալը կրում ե պրիմիտիվ  
բնույթ, վորը բնորոշվում ե քաղաքական գիտակ-  
ցությամբ վ.չ բավականաչափ հասունացած ժամա-  
նակաշրջանով, բայց նրա դիմոկրատիզմը վոչ մի կառ-  
կած չի հարուցում:

Հաղթելով Բասլ Փրենկի թագավորին, Դավիթը  
հաղթվածների համար ուրիշ թագավոր ե կարգում,  
բայց միենույն ժամանակ.

Զաջ մարդեր սպանեց,  
Պատիկներ եել դրեց...

Եպոսում զգացվում ե ժողովրդական հպորության  
շունչը: Նա պատմում ե այնպիսի գործերի մասին,  
վորոնք կարող եյին կատարվել միմիայն մասաների  
սահեծագործական լարումով: Այդպիսին ե հենց սա-  
սունի կառուցումը: Սասունը չի ստեղծվում կառա-  
վարիչների հրամանով, վոր կատարում են ստրուկնե-  
րի անտարեր ձեռքերը: Սասունը կյանքի յե կոչվում  
հակաների աշխատանքի կրքատ լարումով, մասսանե-  
րի ցամանալի ուժով, վոր խոչընդոտներ չի ճանաչում  
տարերքի պես անզուսպ ե, զործում ե նպատակա-

ոլաց բազմությունների որդանական որենքների համաձայն, Սասունը մեկ մարդու, մեկ վարպետի կամքին ու բանականությանն անմատչելի շինարարություն ե: Այդ ժայռերն իրար հարմարեցնել, պարփառների, տների ու տաճարների վերածել կարող ելին միայն ամբողջ ժողովրդի կյանքը՝ մարմնավորող դրուցագունները: Սանտարն ու Բաղդասարն անձնաշփորսմ են բոլոր աշխատավոր հայերի ստեղծագործական կան կարողությունը,

Սասուն—նշանակում ե ցասում: Սասուն քաղաքը ստեղծվեց մասսաների դերանհատական, ցասմալիուրեն լարված ուժով: Գերանհատական կողելուի ամբողջի յերկրպագունքն ե հնչումք քաղաքին անուն տառու նպատակով դրուցագունների կանչած մաճկալի հնտեյալ խոսքերի մեջ.

Եղո՞ր անօւն դնեմ...

Յես ի՞նչ տնօւն դնեմ ես տան:

Օսման բարի տա ձեզ.

Դուք ինչտ՞ե ուժ ունեք,

Վոր վեր հաներ եք ես մեծ մեծ տարեր:

Վա՛, ես ինչ ստուն քարեր են,

Դուք են ստուն քարեր

Ի՞նչպես հաներ եք են վերին տեղ,

Ու քարե սան սան եք գարզե:

Ես տուն չեք ժինե դուք,

Ապա սասուն մեկ օրինե.

Վա՛, տանի սասան բերդ մի.

Ես տուն չե, ես սասուն ե:

Եպոսի գլխավոր հերոս Դավթի անզուսպ ցառըմնալի, խոլական ուժը նույնազես ժողովրդի գերանհատական կարողության մարմնավորումն ե:

Ֆեոդալական հասարակությունների մեջ և հատկապիս արեվելյան գետպոտիաներում մարդկանց փոխարաբերությունները կառուցվում եյին այն բանի վրա, վոր ստորագաները կուրորեն յենթարկվում եցին բարձրադասներին: Գլխավոր առաքինություններն եյին համարվում խոնարհությունը, հնագանդությունը, հպատակությունը: Կրոնը սրբագործում եր այդ կարգերը, ստրկական հիերարխիական կարգերին տալով միատիկական անդրդիլիության յերանգավարում: Կրոնական-քրիստոնեական և նուխաքրիստոնեական-տեսություններն իրենց զգալ են տալիս նաև «Սասունցի Դավիթ»-ի մեջ, բայց նրա մեջ վոչ մի տեղ մենք չենք հանդիպում խոնարհության և հպատակության գովքի: Եպոսը հագեցված ե ազատատիրական վոգով, և նրա բարոյա-իրավական պաֆոսն արդարացիության պաֆոսն ե: «Մարզիկ արդարությամբ եյին ապրում այն ժամանակ», — առում ե անանուն յերգիչն իր փառաբանած ժամանակների մասին: «Եղիսաբէ հերթնվ ե, թե զու վ», — վրդովված հարցնում և Դավիթը Մորա-Մելիքին, վորը փորձում ե նրան խարել յերկրորդ անգամ: Խորամանկությունը, խարեյությունը, յերգմնադանցությունը թշնամիներին բնութագրող հատկություններ են: Սասմատունն ազնիլ ե, ուղղամիտ, տված խոսքին հավատարիմ: Մեծ Մեծ ն ասում ե: «Իմ տված խոսք—խոնք ե... Մեզ սուտ չկա»: Ավելի լավ և մեռներ քան աված խոսքը խախտել, քան խարել.

Համա երբմակուսոր կրթենի,  
Երկօրսու ել կմեռնենի:

Որենքը պարտագիր ե բոլորի համար, հերոսների  
և շարքային մահկանացուների համար, հարուստնե-  
րի, առաջնորդների և սովորական գյուղացիների և  
հովիվների համար:

Մեծ Մհերն իր կնոջից՝ Արմաղանից հեռանալով  
զնում ե Մարա խանումի մոտ, վորը Մհերից աղա յե  
ունենում: Արմաղանն ուխտել ե Մհերին քառասուն  
տարի թույլ չտալ իր անկողինը մտնել: Մհերը վե-  
րադարձավ զզաւով, բախտը նողովելով՝ խանումը  
նրա համար թշնամի յե ծնել իսկ հայունի կնոջից  
նա ժառանգ չունի:

Մհերն սկսեց կնոջը համոզել, վոր ուխտազրուց  
լինի: Նրան ոգնության յեկան վարդապետները: Այ-  
սեարանը շատ մեծ պերճախոսությամբ յերեվան և  
հանում ժողովրդի արհամարհանը դեպի բարձրաս-  
տիճան հոգեվորականներն ու յեկեղեցու կեղծավորու-  
թյունը:

Քանի՞ տարի երգում արե ես, Արմաղան:

Սաւաց.—Տառսուն տարի:

Վարդապետներ ու իշխաններ ասին.

— Որինա՞ծ, որենի՞ ի ձեռ վարդապետաց.

Քառասուն տարին բերենի անոնի տառսուն ամիս,

Քառասուն ամիս բերենի անենի քառսուն օսքար,

Քառասուն օսքար բերենի անենի քառասուն որ,

Քառասուն որ ել բերենի տնենի քառասուն սիար:


... Քառասուն սիար բերենի անենի մըկու

Արմաղանը տեղի տվեց հորդորումներին, ծնեց Սա-  
ռուսի գյուղացուներից մեծագույն նաև Դավթին: Սա-  
կայն ուխտի որենքի խախումն իր հետ բերեց պատի-  
քը, վորից չեյին կարող խուսափել նույն իսկ հերոսնե-  
րը, Հենցվոր ծնվեց Դավթիթը՝ թե՛ Մհերը և թե՛ Արմա-  
ղանը, երկուսն ել մեռան: Որենքը հավասարապես պար-  
տագիր եր բալորի համար, որենքը չի կարելի զայց  
առնել, որենքը բացառություններ չի թույլատրում:

Որոնքի, խօսքի հանգեց յեղած այն վերաբերմուն-  
քի մեջ, վորն արտահատված է «Սասունցի Դավթ»  
եպոսում, ճշմարտության վերաբեոյալ մեղած այն  
պատկերացումների մեջ, վորոնք ծնունդ են առել  
գյուղացիների, հովիվների միջավայրում թագնված ե  
հավասարության տարրակ ևն, անզարդացած հասարա-  
կական հարաւերություններին համապատասխանդ  
հասկացողությունը: «Սասունցի Դավթ»-ը դեմոկրա-  
տական վոգու շկոլան և Սասունցի «Էավիթ»-ի դամո-  
կրատիզմի աղբյուրը հասարակ մարդիկ են, հովիվնե-  
րը, գյուղացիները, արհեստավորները, ժողովուրդը:

Աշխատավոր մասսաներն ապրում եյին ճշմարտու-  
թյամբ և արդարությամբ: Աշխատավորների թշնա-  
միները, ըստ վորում վոչ միայն ոտարերկրացի նվա-  
զողները, այլ և սեփական տիսապետող դասակարգերը,  
ապրում եյին հանցագործութամբ: Վարդապետների  
գատողությունը, վոր անանուն հեղինակը մացրել ե եպո-  
սի մեջ, պերճախոս կերպով ցույց ե տալիս, թե ին քա-  
նով եյին հայ աշխատավորները հավատք ընծայում  
իրենց ներքին գեհապետներ, ին:

Միայն խորհրդավոն իշխանության մեջ աշխատա-  
վորներն այն պահանջանակ պահպանութեան բերին, ուր ճշմար-



տության և արդարության նըանց պատկերացումներն սրբնքի ուժ ստացան:

Արդարության և հավասարության հասկացողությունները հայ ազգային եպոսը փոխադրում է նաև ազգամիջյան հարաբերությունների վրա:

Ժողովրդական խիզախ ֆանտազիան յիրկու մահացու թշնամիներին—Դավթին և Մորա-Մելիքին—յեղբայրներ և համարում: Դավիթը Մհերի վորդին և Սրմադանից, Մելիքը Մհերի վորդին և Մորա խանումից: Դավիթը մեծացավ խորթ մոր տանը, վորը նրա հետ հարազատ վորդու պես եր վարդում:

Մորա-Մելիքն ատում և Դավթին: Նա ուզում է խլել նրա զենք ու զրահը, նրա նիզակը, մտադրվել և սպանել նրան: Իսկ մայրը հորդորում է իր հարազատ վորդուն:

Դավիթ ու ուժն է, ու մեջքի թռւն է:

Դավիթ հեր-ու ներ-ջաջ փանելվա՛ն եղե

Վաղ Դավիթ ել փանելվա՛ն ե՛րլի:

Մեկ մեկելի համակ պիտի բռնեն, կալենք:

Մորա խանումն իր վորդիներին դիտում ե իբրև յերկու տարբեր ժողովուրդների մարմացումը: Յեղբայրներին հաշտության կոչելով, նա ազգամիջյան թշնամանքը վոչնչացնելու կոչ եր անում: Այն ժողովուրդը, վորու առանց կարիքի սուր և բարձրացնում հարեւանի վրա, խախտում է բնության որենքները:

Մելիքի մեր ծծեր ե բաց, կայնեց մելիքի տոշի,

Ասաց.—ըե դու Դավիթ սպանես՝

Ես ծծերի կաթ ու վերան հարամ ըլնի:

Ժողովուրդների յեղբարական հարաբերությունների պահնանջը հայկան հպոսում արտահայտված է վաշմի կեղծ մեկնարանության տեղ չթողնող ուղղակի խոսքերով:

Ասաց.—վոր դու իմ աստ' ծն անելիր.

Տարին յերկու անգամ դու տե՛րայիր իր տուն, Ու տեսնելիր Դավիթն:

Ու դեռ Դավիթն ել կանչելիր՝ բերելիր տուն:

Նև մախս կուրախանուր, կասուր՝ աղբեր կա ինձ: Եւ մարդ չեր կարնա ու վերա խօսի:

Մելիքն ասաց.—Մա՛րե, յես արօք եմ,

Դավիթ՝ նա՛յ ե, եմ վա՞նց կ'ընի ինձի աղբեր: — Մելիքն, — ասաց նամի խարօն: —

Ե, ու յսել չի՞ կտրի:

Համեր արաք ու հա, կ'լնեն աղբեր.

Մեկ-մեկի տուն կերպան

Ու իրօր շատ կրցնեն:

Նև Դավիթն ել մեր պահաւահանձ սրդե՛ն եր:

Պատերազմը յեղբարապան ե, բացի ազգային անկախության համար մղվող պատերազմից: Իրենց ամենապանծալի և ամենապժարին սիրածործությունները Սասունի գյուցազունները կատարում են, պաշտպանելով հայ ժողովրդի ազատությունը: Սասունի քաջերի բոլոր չորս սերունդները վանում եյին այլացեղ նվաճող երին, հայ ժողովրդին ազատում եյին «տիրանների ձեռքից», կոչ մի ռազմատենչ դիտավորություն չունե ող խաղաղ, աշխատասեր ժողովուրդը, պաշտպանելով իր հայրենքը, անեղ ուժ եր ձեռք բերում:

Յես գիտելի, թե եդ Սասուն դաշտ է, գուրան

Պատմում և Մելիքի պատվիրակ կողբաղինը, վոր  
փորձել եր թալանել Սասունը:

Զգիտելի՝ բար եր, կապան:

Եսեղ, նժեր, վոր նօր ելած՝ դիվանական  
Երենց հետ կո՞ բաց ձիբնունը գերան,  
Ենոնի խոսեր ունիս հծան,  
Ենոնց բերբ կեծական...

Սասունի զավակները թշնամու դեմ հանդիման  
առյուծի պես քաջու արի յեն գատնում: «Մեր մեծ  
պապեր մեզ ենալիս են խրատ տվե, վոր թշնամու  
գեմ ելնելուն պես՝ տի կովենք,» սովորոցնում և  
Մեծ Մները: «Ասածուց զրած չեր, վոր մեր ազդ մըսքոց  
գեմ փախնի», — բացականչում և Դավիթը: Դավիթը  
նվաճողի հետ մարտի յե բռնվում վորպես ամբողջ  
ժողովրդի սերկայացուցիչ, վորպես նրա կամքի կա-  
տարող:

Ազբենե՞ր, տօւե՞ր, դուք մի՛ վախենա՞,  
Ասծու կամքագ կ'երբամ յես կոխի,  
Ո՞ տօւե՞ր, դուք կացե՞ք բարօփ,  
Դուք ինձ բուրույրա՞ւն ե՞ արե.  
Ո՞ մօրե՞ր, դուք կացե՞ք բարօփ,  
Դուք ինձի մերուբաւն ե՞ արե....

Սասունի քաջերը հսկայի իրենց կարողությունը  
յերեան ես հանում նախ և առաջ ստարերկ ացի նը-  
գաճողների հետ գոտեմարտելիս: Նրանց գերանհա-  
տական ուժը զրակվոր ւին ու մարմավորումն և թըշ-

համու հարվածն արիաբար հետ մզող ժողովրդի գեր-  
անհատական ուժի: Դավիթի սրի հարվածը կապանք-  
ներից հսկայական ճիգով ազատագրվող ժողովրդի հը-  
գորության պողոթկումն և: Մելիքը Դավիթից պահպեց  
խորը փոսում, վրան քաշեց քառասուն ջաղացաքար  
և քառասուն գոմշի կաշի:

Կանչեց, զարկեց Թալր-Կեծակին:  
Կրտեց բառուն ջադացի բար,  
Կրտեց բառուն գոմշու կածին,  
Կրտեց հրեւ Մկրտ Մելիքին...

Արիությունը, առաքինությունը, ազգային վոգելու-  
րությունը, ազատության համար կյանք տալու պատ-  
րաստակամությունը վստահություն են ստուդում այն  
բանում, վոր ստարերկը յարշավանքը հետ կմղի,  
վոր ազգային անկախությունը կամքապնդվի: Հա-  
զարամյակների ընթացքում բերեներերան հաղորդ-  
վել են սասունցի քաջերի պատմությունները, յեր-  
կար դարեր շարունակ շատ և ծանր փորձություններ  
կրել հայ ժողովուրդը, նրա տշխատավորական մաս-  
սաների չխորտակված ազգային զգացմունքը կենդա-  
նի այժմեյական իմաստ և ավել Դավիթի հետեւ խոս-  
քերին.

Սասնա տուն դեռ չի ավերվե,  
Վոր դուք եկե մեզեն խարջ ու խորաց կուզեք:  
Մուրա գավառ իրեն, Սասնա գավառ մեզի:

Ուշագրավ և այն հանգամանքը, վոր ազգային ար-  
ժանապատվության և ազգային արիության զգաց-  
մունքը մեր ժամանակներից շատ առաջ կազմավոր-

ված եպոսում վոչ մի տեղ չի փոխանցվում ազգային  
բացառիկության, ուրիշ ժողովրդի աշխատավոր մաս-  
սաների հանգեց ատելության: Արյան, թալանի և  
բռնության մեղքը հաւ, ժողովուրդը տիրապետող գա-  
սակարգերից չի փոխադրել աշխատավորների վրա:  
Արշավանքների և պատերազմների պատճառը հայկա-  
կան ազգային եպոսը առանում ե վոչ թե ժողովրդ-  
ների շահերի մեջ, այլ թագավորների և կառավարող-  
ների զավթողական քաղաքականության մեջ: Առա-  
տեսակետից շատ հատկանշաւան ե այն արար ծերու-  
նուն վերաբերող դրվագը, վորին յոթը վորդիների  
հետ մեջ տեղ Մելիքը բռնությամբ պատերազմի յե-  
քանիւ Դավիթն ավերիչ ու մահավիյուռ մըրկի պիս  
անցնում ե արարների բանակով: Ծերունին առանց  
զենքի, գլխաբաց գուրս և վազում զորքերի հոծ բազ-  
մությունից և դիմում սահմանցի հերոսին.

Դավիթ—առա ։—մոռնեմ բո աւեփուն.  
Զե՞ վօր ենո՞ ել մարդ են, խա՞ն են,  
ինչի՞ եր կոսուն, ի՞նչի՞ եր սպանես.  
Զե՞ երդն ե՞ երիստնե՞ ունեն,  
Տո՞ւն ու կրնիկ ունեն:  
Ենանց սպանե՞ նժեռու մեղքը կրնինի բո վիզ.  
Աղքատ ու խեղճ մուզ են եղոնի.  
Վօրը իր մար մեկանան ե,  
Վօրը նու պատկիած տղա.  
Վօրը իր ոչ խի սուն ե,  
Վօրը նանցան մի առն նեազ.  
... Մեզ ին՞ մեդ կա.  
Մրատ մելիքն ե զօռվեն բանե բան

Մրատ Մելիքն ե յո զուման,  
Գընա իր հեդ կոի տրա:

Յեվ Դավիթն լսեց ծերունու խոսքին: Նրա սըր-  
տում ապրում եր հասարակ մարդկանց զգացմունք-  
ների ըմբռնողությունը, նրանց զրության, նրանց  
շահերի հանաչողությունը: Նա պատերազմը վճռեց  
Մըրա-Մելիքի հետ մենամարտելով:

Դավիթը պայքարում եր միայն իր հարազատ  
ժողովրդի անկախության համար: Նա չեր ուղարկ  
հաղթանակն ոգտագործել ոտար յերկրներ ոտրկաց-  
նելու համար: Հաստատուն խաղաղություն կարող ե-  
րին տալ միայն ժողովուրդների իրավահավասարու-  
թյունն ու խաղաղ գործակցությունը: Հաղթելով՝ Մը-  
րա-Մելիքին, Դավիթը նրա զորքին և դիմում հետե-  
լյալ խոսքերով:

Ամենիդ իրավունք կը տամ.  
Ուրտօղեն եկել ե՞ ելք զացե՞ ձեր տեղ:  
Ելե՞, զացօ՞, ու ձեր տեղ նսե՞...  
Հանգա՞ր կացե՞,  
Մեզ ել չելինե՞ ու զայ վեր Սասեա:

Պարզությամբ, արիությամբ, ճշմարտության և  
ազգամիջյան գործակցության վոգով և տողորված  
այս պոհման: Սասունցի գյուցազունների ուղմական  
սիրազործություններն ինքնանպատակ չեյին: Համաշ-  
խարհային ասպետական եպոսի շատ յերկեռում հե-  
րոսների սիրազործությունները կատարվում եյին  
հանուն անձնական փառքի, գեղանի գամայի սիրու-  
զերելու համար: Սասունցի քաջերը սուր եյին մեր-

կացնում հայրենիքը պաշտպանելու համար, յերկիրն  
ոտարերկրացի թշնամիներից կամ նրա ազգաբնակ-  
չությանը բնաջնջող հրեշներից ազատելու համար:  
Սառուցի քաջերի մասին կերտված եպոսի նպատակն  
ու իդեալը խաղաղությունն եւ, աշխատանքը, բարորու-  
թյունը, տոհմի շարունակումը, սերունդների ժառան-  
գականությունը: Ժողովրդական պոեմայի պատկերած  
կենցաղն ու բարքերը պարզ են և դաժան: Նրանց  
գեռ չի փշացրել պերճանեքը, փորպիսին ավելի սուր  
դասակարգային շերտավորման հասած հասարակու-  
թյուններում մեծամասնությունը ստեղծում և չնչին  
փոքրամասնության համար:

Դեմոկրատական հավասարության շունչ և փշում  
նաև պոեմայի այն դրվագներից, ուր բանաստեղծա-  
կան անդրագարձում են ունեցել հայ ժողովրդի մի-  
ֆոլոգիական ավանդությունները բնության ուժերին  
մարդու հպատակիվելու մասին: Սանասարը և Բաղդա-  
սարը վիթխարահսկա ջրաղացաքարերով սպանեցին  
վիշապին, վորը կանոչ քաղաքը զրկել եր ջրից: Հենց  
վոր սատկեց արնակոլու վիշապը, նրա պոչով փակ-  
ված աղբյուրն ազատ հռոց դեպի քաղաք:

Ախպրի օրւ վարարեց, եկո՞վ, եկո՞վ.

Ասեն մարդ առատ-տռատ օրւ կրեցին:

Եպոսի մեջ մտած միֆոլոգիական պատմվածքները  
սքանչելի յեն թե բանաստեղծական կառուցվածքովն  
թե իրենց գաղափարական իմաստով: Լույսը, ջուրը և  
հացը չեն կարող վոչփոքի մենաշնորհը լինել, նրանք  
պետք եւ լինեն ոմեն մարդու մասչելի ընդհանուր  
սեփականություն:

Եպոսը լեցուն և կյանքի, մարդկանց, այսրաշխար-

հյան կյանքի նկատմամբ հավատքով: Նրա մեջ չկա-  
վոչինչ միստիկական, վոչինչ, վոր տեսանելի աշխար-  
հի հետեղում իբր թե թագնված մութ ուժերի զեմ  
հանդիման վախ և փոխարկվել: Աշխարհը գեղեցիկ եւ  
ուժերի լիությունը, հզորության զիտակցությունը  
դառնում ան կյանքին, հողին, մարդու կարիքնելի ու  
յերջանկության համար ստեղծված նրա բարոր հարըս-  
տություններին ուղղված մի որհներգություն: Դավի-  
թը Մելիքի դեմ կովի գնալով, փորձում եր հարվա-  
ծի ուժը: Կայծակ-թրով նա կարեց յերկաթյա սյունը:  
Դավիթը ցնծազին գովք եր յերգում քարերին, բլուր-  
ներին և լեռներին, վատկներին և աղբյուրներին.

Ծովառարու պաղ-պաղ տղբրներ  
Մնացե՛ք բարափ, բարի մնացեր,  
Յսո կե՛րամ կոիվ կը ծարավա՛մ,  
Դու ինձարից կարս' մնացեր,  
Ծովառարու պաղ-պաղ էամիներ,  
Մնացե՛ք բարափ, բարի' մնացեր:  
Յես կութամ կոիվ, կը տոգնա՛մ,  
Դուք ոո՛վ մնացեր:

Եպոսը գերջանում և Դավիթի վորզի Փոքր Մհերին  
վերաբերող պատմությամբ: Սասունի վերջին դյու-  
ցագունը, չնայած իր հսկայական կարողության, իրեն  
անապաստան ու մոլորված և զգում: Նա չգիտե, թե  
ինչպիս կողմնորոշվի բարդացած աշխարհում: Սանա-  
տան այդ քաջ ժառանքը, վորնույն շարքումն և կանգ-  
նած Սասասարի և Բաղդասարի, Մեծ Մհերի և Դավ-  
իթի հետ, յերեխայի պես լաց և լինում և տրտմագին  
յերգում:

Մհերը թափառում ե աշխարհում, փոխվել ե աշխարհը,—շատ ե չարիք կուտակվել, աշխարհի չարիքը դառնությամբ և լցոնում Սասունի վերջին դյուցազունի սիրտը։ Մեծ սիրազործությունների, դյուցազնական որերի ժամանակն անց է կացել, մանրացել են մարդիկ, ծերացել ե ինքը հողը, այլու չի կարող կրել հոկաններին։

Հաղ առջև բռւլացիւ եր,  
Զեր դարի, առջեվ Մհերին։

Մհերը վերադառնում ե Սասուն։ Գնում ե՞՞ Ծովառար, ծնողների գերեզմանի վրա, կոչ ե անում նրանց այւնին, խնդրում ոգնել իրեն։

Աշխարհը կորցրել ե իր փայլը, գարնան ճաճանչը, Սասունը սառցաբույր ձյունով ե պատված, Մհերը մինչև ծունկը ձյան մեջ ե կանգնած։ Մեռած Դավիթը նրան առաջի և վերջին խորհուրդը—այն ժամանակ վերադառնալ աշխարհ, յերբ նա կվերակառուցվի նոր արդար հիմունքներով։

Մհերը թուրը խիեց ժայռին, ժայռը կիսվեց, Մը հերը և Զալալի ձին բացվածքից ներս մտան։ Ժայռը փակվեց նրանց վրա։

Մհերը, ըստ ավանդության, նորից աշխարհ կվերադառնա այն ժամանակ։

Վոր աշխարհ ավերվի, մեկ ել օխնվի,  
Յերսր ցորեն եղավ բանց մասուր մի,  
Ու գարին եղավ բանց ընկուզ մի։

Իր խորիմաստությամբ ապշեցուցիչ ե հայկակավեն եղոսի ժողովրդական սիմվոլիկան։ Դյուցազունն

ների յերեք սերունդներ քաղաքներ հյին շինում, վեշապներ եյին վոչնչացնում, այլացեղ նվաճողներին եյին վոնդում, իրավունք և արդարություն պաշտպանում, իսկ վերջին դյուցազունը, չհաղթահարելով չարիքը, փակից ժայռի մեջ՝ լավագույն ժամանակների սպասելով։ Սերունդեսերունդ ժողովուրդը մեծ գործեր եր կատարում—նրա աշխատանքով, նրա ձեռքով եր կուլտուրա ստեղծվում, նա իր արյամբ պաշտպանում եր յերկրի ագատությունը, բայց իբրջանկություն չուներ, արդարություն չկար։ Աշխարհը վարպետութեան եր կառուցված այն հեռավոր դարերում, յերբ ստեղծվում եր հայկական հովոր, ժողովրդի բանականության համար հեշտ չեր նրանից գլուխհանել —սիրագործությունները ժողովուրդն եր կատարում, իսկ պատուղները հանում եյին մի բուռը պորտարույժների և շահագործողների։ Դյուցազուն ժողովուրդը դարեր շարունակ ապրում եր անապատան վորրի նման։ Բայց ժողովուրդը չեր կորցնում հույսը, չեր կորցնում հավատը, վոր ժամանակները կփոխվեն, աշխարհը նոր ի նորո կվերակառուցի, նորից կզա դյուցազունների դարը, ժողովրդական սիրագործությունները լիություն և յերջանկություն կրերեն իրեն՝ ժողովուրդն։

Ժողովուրը յերագում եր ազատարեր հակաների մասին։ Ժողովրդական կյանքի զարգացումը հանգեց բանվոր դասակարգի կազմավորման, իսկ բանվոր դասակարգն իր շարքերից ծնունդ տվեց կոմունիստական կուսակց ւթյան, ժողովրդի համար մարտնչող հերոսների կուսակցության, կենինի և Սոտինի կուսակցության։

Բոլշեկների պահանջալի կուսակցության կառուցադշների և զեկավարների թվում միշտ յեղել են նաև հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչները, լենինի և Ստալինի զինակիցները, յեղել և պայծառ Շահումյանը: (ծափանարարություններ), յեղել և անմոռանալի Սպանդարյանը (ծափանարարություններ), Դավիթի հոգու նման հոգի ունիցող մարդկակ, վորոնք իրենց կյանքն են տվել սոցիալիզմի հաղթանակի համար:

Ընկերներ, մենք բոլորս, ԽՍՀՄ-ի ամբողջ ժողովուրդը, հարգանքով և հպարտությամբ ենք արտասանում հայ ժողովրդի լավագույն զավակին, Ստալինի աշակերտի և բարեկամի, Քաղըրյուրոյի անդամի և ԽՍՀՄ կառավարության զեկավարներից մեկի՝ Անաստաս Իվանովիչ Միկոյանի անունը (ծափանարարություններ):

Բանվոր դասակարգը և կոմունիստական կուսակցությունը կանգնեցին աշխատավորների և ընչափուրկների գլուխը: Ժողովուրդը բոլշեկների զեկավարությամբ քանդեց հին աշխարհը:

Իմաստուն մարդարեությունը կատարվեց: Շահագործման, կեղեքքման և անարդարության աշխարհը վոչնչացվեց առհավետ: Նոր աշխարհը, սոցիալական հավասարության և արդարության աշխարհը, սոցիալիզմի աշխարհը—կառուցված եւ:

Հողը դարձյալ սկսեց կրել իր վրա զյուցազուններին, խորհրդային դյուցազուններին, հեղոսներին, վորոնք մարդու բարիքի համար նվաճել են և տապ հարավը, և ցրաշունչ հյուսիսը, վորպես անպարտելի գետքեր կանգնած են իրենց մեծ հայրենիքի սահմանների վրա:

Խորհրդային մեծ Միության ժողովուրդներն անխորտակելի բարեկամությամբ են աղբում: Ցորենն իրոք վոր դարձել և «Քանց ընկուզի մի», վորովհեակ այս բանասահեծական արտահայտությունը նշանակում է վոր թյան և բավականության յերազ, իսկ խորհրդային իշխանությունն իրազործել և այն:

Աշխարհը նոր ի նոր վերակառուցվեց Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի մեծ ու անարտելի դըրոշի ներքո: Լենինի և Ստալինի ուսմունքը յերջանակություն, ազատություն և բարորություն բերավ թվով փոքր, բայց իր պատմությամբ, իր վոգով մեծ հայ ժողովրդին:

Հայ ժողովուրդը, ուռւ ժողովրդի հզոր աջակցությամբ, ազատություն նվաճեց, ազատագրվեց թե ազգային հնշումից, և թե սեփական արնախում շահագործողներից:

Մենք կարող ենք հանգիստ նայել դեպի ապագան: Մենք ուժեղ ենք ու միանական, մենք ապրում ենք համերաշխ, անքակետելի ընտանիքով: Իզուր չե, վոր «Սասունցի Դավիթ»-ի ընթերցանությունը մեզ բոլորին մեջ առաջացնում ե մեկ միտք և մեկ զգացմունք: Թող համարձակվեն ժամանակակից Մելիքներն իրենց հրասակները շարժել դեպի խորհրդային հողը: Մենք ունենք մեր Զարալի ձին—մեր տանկերն ու զրահապատները, մեր ողանակերն ու ուղղմանակերը, մենք ունենք մեր թուրքայիծակին—Կարմիր Բանակի հրանոթների վորոշիլովյան համազարկերը, (ծափանարարություններ):

Մեկ ակնթարթ միայն ժամանակակից խորհրդային Դավիթները մերկացրին իրենց թուրքայծակին

—և ճապոնական սամուրայները գլխիվայր գլորվեցին  
Խասանի բարձրունքներից ու մեր բարեկամ Մոնղո-  
լական ժողովրդական Հանրապետության սահմաննե-  
րից: Բոլոր թնամիները, վորոնք ատամ են որում  
մեր խորհրդային յերկրի վրա, պետք եւ անդիր անեն  
Դավթի հանդարս, բայց հպարտ նախազգուշացումը:

Մեկել որ զենք առնեք մեր դեմ  
Թե որ դուք կովի զաք վեր մեզ՝  
Քառսուն զազ խօս հորում ըլնեք,  
Թե զաղացի ջաջ ժարի տակ,  
Տե՛լնի ձեր դեմ Սոսնա Դավիր,  
Տելնի ձեր դեմ Թաւր-Կեծակին:

(Ճափահարություններ)

Մեր բոլոր սահմաններն ամուր կողպեքի տակ են,  
մենք լիցուն ենք աշխատանքի և հաղթանակի կամ-  
քով: Մենք գնում ենք գեղի կոմունիզմը, և մեզ հետ  
դեպի պայծառ ապագան ենք տանում այն ամեն ար-  
ժեքավորը, ինչ ստեղծել են ժողովրդական հանձարն  
ու անցյալ դարերի ստեղծագործ մտքերը: Այդ կուլ-  
տուրական ժառանգության մեջ իր պատվավոր տեղն ե  
գրավում հայ ժողովրդի հերոսական հպատը — «Սասուն-  
ցի Դավիթ»-ը:

«Սասունցի Դավիթ»-ի հորլյանը դարձավ Խոր-  
հուրդների ամբողջ յեղակի այսորիա ակտուալ մի ի-  
րադարձություն:

Եւնք դիմում ենք սացյալին վոչ թե թանգարա-  
նային հիացմունքու, այլ այն բանի համար, վոր  
անցյալի փորձի վրա հետևող ստեղծենք նորու:

Մենք կառուցու ենք կոմունիստական հասարա-

կություն և կլասուցենք այն: Դրան յերաշխիք եւ մեր  
կուսակցությունը, գրան յերաշխիք եւ մհծ Ստալինը  
(Ճափահարություններ):

Կեցցեն յերջանիկ և իրավահավասար խորհրդային  
ժողովուրդները:


Կեցցեն հայ ժողովուրդը:

Կեցցեն ժողովուրդների ստալինյան բարեկամու-  
թյունը:

Թաղ ապրի և բարգավաճի մեր մհծ և անպարտելի  
հայրենիքը:

Կեցցեն սոցիալիստական հաղթանակների հանձարեղ  
գարպետ ՍՏԱԼԻՆԸ:

(Յեկարանի ճափահարություններ):



Պատ. Խմբագիր՝ Հ. Մելիքյան  
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան  
Սբագրիչներ՝ Բ. Դուկասյան, Ա. Արդաքանյան

Գլավլիտի լիազոր՝ Զ—1032 Հրատ. № 5085.  
Պատվեր 859. Տիրաժ 2000.  
Թուղթ 62×94. Տպագր. 2 մամ.  
Մեկ մամ. 25,000 նշան.  
Հանձնված և արտադրության 29 նոյեմբերի  
1939 թ.  
Ստորագրված և տպագրության համար 2 հուն-  
վարի 1940 թ.  
Պետհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0373290

63.984

ԳԻՒԾ 1 Ա.

Ա րմ.  
2-5259<sub>2</sub>

Վ. Կիրքոտին  
Վеликий эпос армянского народа  
„Давид Сасунский“  
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.